

## ՀԱՄՇԵՆՆԱԿԱՆՆԵՐ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

### ԱՐԽԱԶԻԱ. ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՎԱՏՈՎ

Արխագիայի Հանրապետությունում ապրում է հայ ժողովրդի մի սովոր հատված՝ հիմնականում համշենցի հայեր, ապրում է լիարյուն ու ստեղծարար կյանքով: Տեղին է ասել, որ 1992-1993 թվականների վրաց-արխագական պատերազմը մեծագույն ողբերգություն էր նաև մեր հայ հատվածի համար: Այն վատթարագույն անդրադարձավ հանրապետության կրթական համակարգի զարգացման վրա: Այլ դպրոցների հետ տուժեցին նաև հայկական կրթօջախները:

Այսօր Արխագական Հանրապետությունում գործում է հայկական 31 դպրոց (նշենք, որ մեր բոլոր դպրոցները պետական են):

Արխագիայի հայերի միությունը, նախագահ Խաչիկ Մինասյանի ղեկավարությամբ, ակտիվորեն համագործակցում է դպրոցների հետ, հնարավորության սահմաններում փորձում է լուծել նրանց առջև ծառայած հիմնահարցերը:

Իսկ խնդիրներ մեր կրթօջախներում, իհարկե, կան: Եվ այդ խնդիրները լուծելու, հաղթահարելու համար մենք Քաղաքում հայկական դպրոցների ղեկավարների ամենամյա խորհրդակցություն ենք անցկացնում, որտեղ ելույթ են ունենում մեր լավագույն ուսուցիչները: Մենք լավ ենք գիտակցում, որ հայկական դպրոցներում ուսումնառատարակչական աշխատանքի բովանդակությունը պիտի հետապնդի հայապահպանական նպատակ: Հայապահպանություն. ահա այն կարևորագույն հիմնահարցը, որն այսօր ամենայն պրոբլեմա ծառայել է մեր առջև և սերտորեն կապված է ուսուցչական կարգերի և, մասնավորապես, հայոց լեզվի և գրականության մասնագետների պատրաստման հետ: Քաղաքում չէ, որ մեր դպրոցներում հայոց լեզվի և գրականության երիտասարդ ուսուցիչներ այսօր համարյա թե չկան: Սա այն խնդիրն է, որը լուրջ ու իրատեսաբար, գուցե նաև պետական լուծում է պահանջում:

Մեզ անհանգստացնում է նաև այն տխուր փաստը, որ հայ երեխաների մի սովոր հատված գերադասում է սովորել ռուսական դպրոցներում՝ պատճառաբանելով, թե կայուն կապ չկա Հայաստանի հետ և իրենց ուսման շարունակությունը պիտի շարունակեն լինի: Ինչ խոսք, հանրապետությունում շատ է կարևորվել ռուսաց լեզվի նշանակությունը, իր ազդեցությունն ունի Արխագիայի քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի ամրապնդումը Ռուսաստանի հետ:

Ուզում են անպայման նշել, որ բարի պտուղներ է տալիս Արխագիայի հայերի միության սերտ համագործակցությունը Հայաստանի Սփյուռքի նախարարության հետ. մայրենիի ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, «Արի տուն» ծրագիրը անպայման ոգևորում ու խրատում են մեր հայրենակիցներին, չէ՞ որ հայեցի կրթության ու դաստիարակության համակարգը հայ ժողովրդի հանդեպ ունեցած հպարտության զգացումից է սկսվում:

Շատ է կարևոր, որ հայ երեխան իր աչքերով տեսնի Հայրենիքը, խմի նրա ջուրը, շնչի նրա օդը: Կարևոր է նաև այն փաստը, որ Հայաստանի կրթության նախարարությունը մեր դպրոցներն ապահովում է անհրաժեշտ դասագրքերով: Այս փաստերը կրթականից բացի, նաև հոգեբանական նշանակություն ունեն: Այսօր Արխագիայի հայերի կյանքում սկսվում է ձևավորվել բարեգործության համակարգը, որն արդեն իր դրական արդյունքներն է տալիս: Մենք լուրջ հույսեր ենք կապում բարեգործների հետ, հավատում ենք, որ նրանց օրինակին կհետևեն բոլոր նրանք, ովքեր օգնելու, սատարելու կարողություն ունեն: Զգալի է դպրոցներում Արխագիայի հայերի միության կատարած աշխատանքը: Հուսով ենք, որ դրականը կավելանա և աշակերտության թվաճան այս տարի կուրախացնի մեզ:

Աշակերտների քանակի ավելացումը կապված է առարկաների դասավանդման դրվածքի բարելավման հետ: Իր դրական

արդյունքն է տալիս, ինչպես արդեն ասացինք, նաև Հայաստանի հետ մեր կապերի ամրապնդումը: Եվ մեր ցանկությունն է, որ այդ կապերն ավելի խորանան ու ավելի ամրապնդվեն, և ոչ միայն կրթության բնագավառում:

Բավականությամբ ուզում ենք նշել, որ բոլոր հայկական դպրոցներն այսօր ապահովվել են ժամանակակից կահույքով՝ սեղաններով, աթոռներով, գրատախտակներով, մի շարք դպրոցներ նորոգվել են: Բայց սա հարցի, եթե կարելի է այսպես ասել, տեխնիկական կողմն է, որն ապահովում է արխագական պետությունը: Իսկ հարցի որակական կողմի ապահովումը միայն մեր գործն է, մեր սուրբ պարտականությունը:

Արխագիայի հայ հասարակայնության առջև խնդիրներ կան, որոնք լուրջ մտեցնում են ու կշռադատված լուծումներ են պահանջում: Եվ մենք հավատում ենք, որ կհաղթահարենք այդ դժվարությունները, որովհետև մեր մեջ կա դժվարությունները հաղթահարելու ցանկություն, կա հավատ:

Արխագիայի կրթության նախարարության հայկական դպրոցների գծով առաջատար մասնագետ

ՄԱՐՏԻՆԱ ՄԱՐԵՑԻԱՆ  
Արխագիայի կրթության  
նախարարության հայկական  
դպրոցների գծով առաջատար  
մասնագետ

Յուրաքանչյուր մարդ, կարծում եմ, ուզում է տեսնել իր նախնայաց երկիրը, զգալ, թե ի՞նչ է նշանակում քայլել «հայրենիք» կոչվող հողակտորով: Ես էլ բացառություն չեմ: Մանկությունից երազում էի տեսնել Հայաստանը: Նայում էի դպրոցի միջանցքի պատերին կախված նկարներին ու գաղտնի երազում դրանք տեսնելու, շոշափելու մասին: Հետո սկսեցի աշխատել դպրոցում, և այդ երազանքն ավելի էր անհանգստացնում ինձ:

Հոգուս խորքում այդքան երկար փայփայված երազանքն այս ամառ վերջապես իրականություն դարձավ: 10 օր վայելեցի Հայաստանը: Եվ նոր միայն հասկացա աշակերտական տարիներին սովորած բանաստեղծական տողերի իմաստը:

Ես կարծում էի, թե պիտի տեսնեմ Միայն մի երկինք ... 20 երկնքի համազարկ եղավ ... Հասկացա Ալիսիա Կիրակոսյանին ու զարմացա, թե ինչքան բան կար իմ հոգում, և ինչպե՞ս է, որ չգիտեի դրանց գոյության մասին: Հասկացա, որ դա է կոչվում «արյան կանչ»:

Քայլեցի Երևանի փողոցներով, ծաղիկներ դրեցի Ծիծեռնակաբերդի ու Եռաբլուրի հուշարձաններին, հիացա ու զարմացա Մատենադարանի ձեռագրերով:

Ա. Խաչատրյանի անունը կրող դահլիճում տեսած «Կարին» համույթի համերգի տպավորությունը չի անցնում մինչև հիմա... Փոքրիկ մի աղջնակ բեմից հարցնում էր «Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք»:

Եվ ես հիմա հաստատ ու որոշակի գիտեմ, թե որն է մեր հայրենիքը: Մեր հայրենիքը Խոր Վիրապն է, որտեղ իմ ժողովրդի հավատի պատմությունն է ծնունդ առել: Նորավանքի համալիրն է՝ Եթերային, և նրա շուրջ եղած բոսոր ժայռերը: Իր վեհ խստությամբ ժայռազխիւն բազմած Տաթևի համալիրն է: Մեր հայրենիքը հազարամյա քարաշարն է Քարահունջ անվամբ, որի

### ԵՐԱԶԻ ԻՄ ԵՐԿԻՐ...



թե ինչու՞ է Սևանը «ծով»:  
Ես հասկացա, որ մի բան է, երբ Մուրացանի վեպում Քառնիի ամրոցի նկարագիրն էս կարդում ու դպրոցի պատին տեսնում նրա նկարը, և մի այլ բան՝ Քառնիի ամրոցի աստիճաններին նստած վայելում ներսում հնչող դուդուկի հեզեհմա մեղեդին:

Մի բան է՝ 40 կերպարանքով նկարներից նայող Արարատը, և մեկ այլ բան, երբ այդ Արարատին դու ես նայում Չարենցի կամարից ու լսում կողքի կանգնածի հուզված արտասանությունը.

Այն ո՞վ է ասում,  
Թե Արարատը ձերն է ու ձերը:  
Անհեթեթ պատրանք ...  
Մոխիրն է ձերը,  
Լեռը բաղադրող կոչկոռը քարե,  
Իսկ հոգին մերն է...

... Ես հիմա ոչ միայն գիտեմ, թե «որն է մեր հայրենիք», այլ գիտեմ, որ այդ հայրենիքն այսուհետև ինձ կօգնի ավելի իմաստավորված ապրել: Շուտով կգա սեպտեմբերը, և թեպետ ես մաթեմատիկա եմ դասավանդում, իմ առաջին դասերը Հայաստան կատարած ճամփորդությանս եմ նվիրելու:

... Ու եթե դժվար պահեր լինեն իմ կյանքում, կվազվեմ Քեղարդից բերած ջրով, և ամեն ինչ իր տեղը կընկնի:

Շենացի՛ր, Հայաստան: Ես նորից կգամ, դեռ այնքան բան կա, որ չհասցրի տեսնել:

ԱՆՎԱՐԴ ՔԵՍՅԱՆ  
Արխագիա, Գուդաութի շրջանի  
Ազարակ գյուղի հայկական միջնակարգ  
դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի









ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՄԵԿ ԴՐՎԱԳ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՑՅԱԼԻՑ

1981-82թթ. աշխատում էի «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրությունում: Սիրում էի թերթել հին համարները և 1968թ. 12-րդ համարում կարդացի Բարունակ Թռչաքյանի փոքր հոդվածը՝ «Փրկված մի լուսանկար Սյունիի կյանքից» (էջ 54-55): Այն օրերին ռադիոյով և հեռուստատեսությամբ հաճախ էին հնչում Սյունիի ստեղծագործությունները և ժողովրդական երգերի հանրաճանաչ մշակումները՝ «Սարերի հովին մեռնեն», «Հոյ նար», «Այ, մարալ աղջիկ», «Զինչ ու զինչ», «Վարդն ի բացվե», «Սարերը ման եմ եկել», «Հարբան», «Շողեր ջան», «Սարեն կուգա ծիսվոր», «Ցորեն եմ ցանել» և այլն: Գրիգոր Սյունին (Միրզայան) 1876թ. ծնվել է Գանձակի Գետաբեկ գյուղում (այժմ Աղբերջանի կազմում է), երկու տարեկանից ապրել է Շուշիում, սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Կարա-Մուրզայի և Կոմիտասի ազդեցությամբ հավաքել է ժողովրդական երգեր: 1904-ին ավարտել է Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան, որտեղ աշակերտել է Ն. Ռինսկի-Կորսակովին, Ա. Գլազունովին և այլ նշանավոր կոմպոզիտորներին: Ապրել և աշխատել է Թիֆլիսում, Տրապիզոնում, Կարինում (Էրզրում), Թեհրանում, Կ. Պոլիսում: 1923թ. ընտանյոք տեղափոխվել է ԱՄՆ, ուր 1939թ. մահացել է Ֆիլադելֆիայում:



Տրապիզոնի նվագախումբը

Ինչպես իր հոդվածում Բ. Թռչաքյանն է գրել, Գ. Սյունին 1909-10թթ. ապրել է Տրապիզոնում, կազմակերպել երգչախումբ և նվագախումբ, որոնց համերգներից մեկը անհայտ անձինք ձայնողել են: Ինչու: Այն հեռավոր տարիներին, երբ մուսն ընկնելուց հետո ընտանիքները ճրագի կամ նավթի լամպի լույսի ներքո հավաքվում էին մեկ սենյակում, տաղտուկ առօրյայով ապրող բազմազգ քաղաքում հայկական երգչախմբի ու նվագախմբի համերգները իսկական տոն պիտի լինեին: Ուրեմն ովքեր էին, որ ձայնողել էին այդ տոնը՝ Տրապիզոնի մշակութային տարեգրության մեջ գրվելու արժանի այդ իրադարձությունը, Թռչաքյանը չի գրում: Նա միայն ասում է՝ «նենգ մարդիկ»: Եթե խափանողները թուրքեր լինեին, կարծում եմ՝ կնշեր: Պիտի ենթադրել, որ թուրքեր չէին, մանավանդ որ 1909-10թթ. Թուրքիայում բավական ազատ մթնոլորտ էր: Այդ տարիներին Տրապիզոն քաղաքում, տարբեր տևողությամբ, լույս են տեսել 5 շաբաթաթերթեր՝ «Գեղջուկ», «Խարիսխ», «Մոծակ», «Շարժում», «Պոնտոս» («Հայ պարբերական մամուլ, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Մ. Բաբլոյան», Երևան, 1986, էջ 70, 77, 84, 85, 348): Եթե Թուրքերը լինեին, Գ. Սյունիի կենսագիրները, ինքը՝ Սյունին էլ կնշեր, որ հավածվել է ազգային գործունեության համար: Այնինչ, ինչպես կտեսնենք, ոչ կենսագիրները, ոչ Սյունին այս միջադեպը չեն հիշում: Իսկ գուցե չե՞ն ուզում հիշել: Ինչու:

Ես ծանոթ էի Բ. Թռչաքյանին, նոր էր Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրու-

թյան ինստիտուտի «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարով լույս տեսել նրա «Համշենահայերի ազգագրությունը» (1981) գիրքը: Սոչիից Երևան գալիս երբեմն հանդիպում էինք, բայց ես համշենցի հայերի մասին այնքան շատ հարցեր էի ունենում նրան տալու, որ այս հոդվածի մանրամասների մասին՝ թե ովքեր էին ինչու՞ էին խափանել համերգը, խոսելու ժամանակ չէր մնում: Բ. Թռչաքյանը համշենահայերի ազգագրության անգերազանցելի գիտակ էր, 1899թ. ծնվել էր Տրապիզոնի մոտակա Կյուշանա գյուղում, 1914թ. ավարտել Տրապիզոնի Սահակ-Մեսրոպյան ութամյա վարժարանը, այնուհետև զենքը ձեռքին մարտնչել էր լեռներում, իսկ 1918թ. գարնանը վերաբնակվել Սոչիի շրջանում:

Բ. Թռչաքյանին չտրված հարցի պատասխանը տարիներ անց փորձեցի գտնել 1943թ. Ֆիլադելֆիայում հրատարակված Հակոբ Գույումձյանի «Գրիգոր Մ. Սյունի, երաժշտագետը եւ մարդը. կենսագրական ուրագիծ եւ յիշողություններ» գրքում: Գ. Սյունիի հանդեպ էիսպանում էր Բ. Թռչաքյանը: Սյունին լինելով ՀՅԴ անդամ, համաձայն այս գրքի, ցարական գաղտնի ծառայությունների կողմից ենթարկվել է քաղաքական հետապնդումների, ինչի պատճառով, լազի հագուստներ հագած, լազ մակուկավարի հետ ծովով անցել է ռուս-թուրքական սահմանը և

ապաստանել Տրապիզոնում: Այստեղ նա աշխատանքի է ընդունվել Ազգային վարժարանում: 1909թ. նրա ընտանիքը Թիֆլիսից տեղափոխվել է Տրապիզոն, և Սյունիի կինը՝ Նատաշան ևս ընդունվել է Ազգային վարժարան, որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: Հաջորդ տարի Գ. Սյունին բնակության է տեղափոխվել Էրզրում, ուր ուսուցիչ է աշխատել Սանասարյան նշանավոր վարժարանում:

Այսպիսով, Հ. Գույումձյանի գրքում խոսք չկա Գրիգոր Սյունիի Տրապիզոնում կազմակերպած երգչախմբի և նվագախմբի մասին, հասկանալի է, որ նաև դրանց համերգներից մեկի ձայնողման մասին: Սյունիի ձեռքով գրված ինքնակենսագրության մեջ, որը տպագրվել է նրա մահից 66 տարի անց, թեև խոսվում է համերգների հաջողության մասին, կրկին որևէ միջադեպ չի հիշատակվում (Գ. Սյունի, Հայ երաժշտություն, Երևան, 2005): Նա իր մասին երրորդ դեմքով գրում է, որ 1908թ. Բաթումից Տրապիզոն տեղափոխվելուց հետո «Տրապիզոնի, Սամսոնի, Կիրասոնի մէջ զուտ խմբական և խմբական օրբեստրային (խառն) թե՛ հայկական և թե՛ հայ-թուրք-յունական մի շարք անառարկելի խանդավառություն առաջ բերող յաջող կոնցերտներից և Փոքր Հայքի՝ Սամսոն-Սեբաստիա ճանապարհի 2 կողմը ընկած շրջանների ժողովրդական երգերի ու պարերի հաւաքումից և ուսումնասիրությունից յետոյ կազմակերպում է Սամսոնի ռեժիսի պահեստի մէջ պահ դրած զինուորական իշխանութան պատկանող միլիոնաւոր փամփուշտների հետ 2000 մուսադէլ նոր հրացանները դատարկել և զիւղացիութիւնն ու բանուորութիւնը զինել» (էջ 115): Քաղվածքը տեղեկացնում է, որ

համերգներ են տեղի ունեցել ոչ միայն Տրապիզոնում, այլև Սամսոնում և Կիրասոնում, դրանք ջերմ ընդունելության են արժանացել: Իսկ քաղվածքի երկրորդ մասը՝ թուրքական բանակի զենքերը բանվորներին ու գուրդացիներին բաժանելու նրա չիրագործված վտանգավոր ծրագրի մասին, թեմային չի առնչվում, ուստի չեմ մեկնաբանի:

Օրերս կարդում էի Սիմոն Կրացյանի «Կենքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ» գրքի 2-րդ հատորը (Պեյրուք, 1960), որի մեկ գլուխը վերնագրված է «Սիւնիի գործը» և նվիրված է նրա գործունեությանը Տրապիզոնում, Կարինում, նաև ԱՄՆ-ում: Կարդացի և հիշեցի Բ. Թռչաքյանի հոդվածը: Փորձեցի գտնել Բ. Թռչաքյանին չտրված հարցի պատասխանը: Կարծում եմ՝ որոշ չափով գտա: Այդ գլխի միայն Տրապիզոնի վերաբերող մասն է (էջ 140-146) արտատպելով, հուսով եմ, որ ընթերցողները ևս քիչ թե շատ պատկերացում կկազմեն տրապիզոնյան համերգի ձայնողման պատճառների մասին, նաև կանեն որոշակի հետևություններ:

Անհրաժեշտ եմ համարում Ս. Կրացյանի հուշագրության մեջ հանդիպող երկու անձանց՝ Արշակ Թռչաքյանի և Տեր Արիստակես քին. Թռչաքյանի մասին մի քանի մանրամասներ հաղորդել:

Ըստ 1889թ. Տրապիզոն քաղաքի մոտակա Կյուշանա գյուղում ծնված նշանավոր վրիժառու Միսաք Թռչաքյանի «Օրերուս հետ» (Պեյրուք, 2001) հուշագրության, Արշակ Թռչաքյանը ծնվել է 1879թ. Յոնուրայի գավառի Ապիոն գյուղում: ՀՅԴ անդամ էր, գյուղի կյանքում ուներ ազդեցիկ դիրք, բայց 1910թ. սպանվում է: Մարդասպանը

նրա հորեղբոր որդին էր, որին էլ հետագայում սպանում են Արշակի ընկերները (էջ 183-184, 203-204):

Իսկ Տեր Արիստակես քին. Թռչաքյանի (Քրմապետ) մասին տեղեկությունները քաղել եմ Հովակիմ Հովակիմյանի 1967թ. Բեյրութում հրատարակված «Պատմություն հայկական Պոնտոսի» գրքից: Տեր Արիստակեսը 1903-ից ՀՅԴ անդամ էր, նրա մասին Հ. Հովակիմյանը գրում է. «Կրոնաւոր մըն էր իր հազուստով, եկեղեցիին մէջ, հաւատացեալներու հետ, բայց անկէ դուրս ազգային-յեղափոխական գործիչ մըն էր եւ լաւ կազմակերպող մը: Իր խօսակցութեամբ, վարուելակերպով եւ արտաքին վայելչութեամբ առինքնող դէմք մըն էր, առանց մասնաւոր ճիգի ինքզինքը պարտադրող հեղինակութիւն մը ոչ միայն զինքը սիրող եւ յարգողներուն, այլ եւ իր հակառակորդներուն եւ նոյնիսկ թշնամիներուն համար: Մտաւոր ու բարոյական ուժին հետ, ունէր նաեւ ֆիզիքական ոյժ, եւ, տեղը եկած ժամանակ կը գործադրէր...»

Մարայր գիւղը, ուր ուսուցիչ էի 1913-14-ին, ամիսը անգամ մը կը տեսնէի զինքը, երբ մէկ օրով հիւր կը մնար մեզի: Այդ օրերուն անձամբ զգացի անոր մեծությունը: ...Պաշտամունքի աստիճան սիրեցի զինքը ակնածանքով» (էջ 385-386):

Սակայն, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, Տեր Արիստակեսը, անսպասելիորեն, իր որդու ձեռքը բռնած, կամավոր գնում է թուրքական բանակ, ինչը այդպես էլ առեղծված է մնում նրան ճանաչողների համար: Մի օր էլ հայտնի է դառնում, որ թուրքերը նրան ստիպել են փորել սեփական գերեզմանը և կացնահարել են:



